ԿԱՐԾԻՔ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ Լալա Արշավիրի Գրիգորյանի «Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները» ատենախոսության

Քրեական իրավունքի դոկտրինայի, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի վիճահարույց խնդիրների շրջանակում իր կարևորությամբ և բարդությամբ առանձնանում է հանցանքի միջնորդավորված կատարման ինստիտուտը: Գործող քրեական օրենսգիրքը չի նախատեսում հանցանքի միջնորդավորված կատարման ինստիտուտը, այլ միայն հանցակցության ինստիտուտի շրջանակներում, կատարողի սահմանման մեջ ներկայացնում է դրա առանձին դրսևորումները, որոնք, սակայն, հնարավորություն չեն տալիս լուծում տալ հանցանքը միջնորդավորված կատարելու բոլոր իրավիճակներին:

Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են իրավիճակներ, երբ հանցանքի կատարումն իրականացվում է մեկ անձի կողմից՝ քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձին օգտագործելով, և հարց է առաջանում, թե որքանով է այդ դեպքերում կիրառելի հանցակցության ինստիտուտը կամ նշված անձանց հանցանքի կատարման համար օգտագործում է ոչ թե կատարողը, այլ մեկ այլ հանցակից, օրինակ՝ դրդիչը, օժանդակողը:

Միաժամանակ, հանցանքի միջնորդավորված կատարման ինստիտուտին դիմելու անհրաժեշտություն է առաջանում հանցակցության ձևերը որոշելիս, մասնավորապես՝ խմբի կողմից հանցանքի կատարման հանգամանքը պարզաբանելիս, այն է՝ թե հնարավոր է, օրինակ, հանցանքը համարել կատարված մի խումբ անձանց կողմից, եթե քրեական պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող երկու անձինք, անձամբ չմասնակցելով հանցանքի օբյեկտիվ կողմի կատարմանը, այն իրականացրել են քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ մեկ անձի օգտագործելով կամ եթե օգտագործել են նման մի քանի անձանց կամ եթե քրեական պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող մեկ անձն է օգտագործել երկու կամ ավելի անմեղսունակների կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց և այլն: Ներկայացածը քննարկվող ինստիտուտին առնչվող խնդիրների միայն մի փոքր մասն է:

Հանցանքի միջնորդավորված կատարման ինստիտուտի կանոնակարգման անհրաժեշտությունը ակնհայտ է թե՛ տեսական մակարդակում ծագած խնդիրներին լուծում տալու, թե՛ իրավակիրառ պրակտիկայում՝ հանցագործությունների ճիշտ որակումն ու կատարվածի համար արդարացի պատժի նշանակումն ապահովելու առումով:

Ասվածը, բնականաբար, վկայում է Լ. Գրիգորյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Հանցագործության միջնորդավորված կատարման ընդհանուր բնութագիրը» հեղինակը ներկայացնում է հանցագործության կատարողի օրենսդրական բնորոշման պատմական զարգացումն ու կատարելագործման հեռանկարները, քննարկում հանցագործության միջնորդավորված կատարման հասկացությունը, հատկանիշները և հարաբերակցությունը հանցագործության մասնակիցների բազմաթվության այլ ձևերի հետ, պարզաբանում հանցագործության միջնորդավորված կատարման իրավական կարգավորումն արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա, հեղինակը կատարում է մի շարք արժեքավոր առաջարկներ, այն է՝ հանցանքի միջնորդավորված կատարման մասին դրույթը դուրս բերել կատարողի սահմանումից և դրա վերաբերյալ ինքնուրույն հոդված նախատեսել հանցակցության ինստիտուտից առանձին, հանկանոնակարգել հանցանքի միջնորդավորված կատարման հնարավորությունը ոչ միայն կատարողի, այլև դրդիչի, օժանդակողի, կազմակերպիչի դեպքում, օրենսդրական լուծում տալ հանցանքի միջնորդավորված կատարման պարագայում կամովին հրաժարման ինստիտուտին և այլն:

Վերլուծության ենթարկելով հանցանքի միջնորդավորված կատարման վերաբերյալ տարբեր հեղինակների արտահայտած տեսակետները՝ Լ. Գրիգորյանը լիովին հիմնավորված գալիս է հետևության, որ հատուկ սուբյեկտի կողմից հատուկ սուբյեկտի

հատկանիշներով չօժտված, բայց քրեական պատասխանատվության ենթակա անձի ներգրավումը հատուկ սուբյեկտով հանցանքի կատարմանը հանդիսանում է հանցակցության յուրահատուկ դրսևորում, բայց ոչ հանցագործության միջնորդավորված կատարում, քանի որ տվյալ դեպքում ներգրավվող անձն ամբողջությամբ գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունը և օժտված է ազատ կամքով: Նման դիրքորոշումը, թեև տարբերվում է հեղինակների մեծամասնության կողմից գրականության մեջ արտահայտված տեսակետից, սակայն ատենախոսի կողմից լավ փաստարկված է և պատճառաբանված, և հնարավորություն կտա իրավակիրառ պրակտիկայում խուսափել արարքների որակման ժամանակ առաջացող մի շարք խնդիրներից:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է հանցագործությունների միջնորդավորված կատարման դրսևորումների վերլուծությանը, մասնավորապես՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ գործող անձի կամ հրաման կամ կարգադրություն կատարող անձի, առանց մեղքի կամ անզգուշությամբ վնաս պատճառող անձի օգտագործման իրավիճակներին:

Հեղինակի կողմից այս առումով ներկայացված են հատկապես գործնական կիրառության առումով արժեքավոր մի շարք առաջարկներ, մասնավորապես՝ հեղինակը գտնում է, որ եթե հանցագործության սուբյեկտը գիտակցում է, որ հանցանքի կատարմանն է ներգրավում սահմանափակ մեղսունակության վիճակում գտնվող անձի, ապա հանցագործության միջնորդավորված կատարումը բացակայում է և առկա է դերերի բաշխմամբ հացակցություն, մինչդեռ եթե հանցագործության սուբյեկտը գիտակցում է, որ հանցանքի կատարման համար օգտագործում է քրեական պատասխանատվության տարիքի հասած այնպիսի անձի, ով մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցելու իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարելու դա, ապա առկա է հանցանքի միջնորդավորված կատարում: Նման հետևությունները տրամաբանորեն բխում են հեղինակի կողմից առաջ քաշված՝ միջնորդավորված կատարումը հանցանքի կատարմանը ներգրավվող անձի խոցելիությամբ պայմանավորելու սկզբունքային մոտեցումներին:

Հեղինակի կողմից անուշադրության չի մատնվել նաև միջնորդավորված կատարման հարցի քննարկումը՝ հանցանքը խմբի կողմից կատարված լինելու տեսանկյունից: Մասնավորապես, Լ. Գրիգորյանը նշում է, որ եթե հանցագործության սուբյեկտի

հատկանիշներով օժտված երկու կամ ավելի անձինք հանցանքը կատարում են քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձին օգտագործելով, ապա առկա է համակատարում: Իսկ եթե հանցագործության սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձը հանցանքը կատարում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող երկու կամ ավելի անձնաց օգտագործելով, ապա համակատարումը բացակայում է և առկա է հանցագործության միջնորդավորված կատարում: Նման առաջարկների օրենսդրական ամրագրումը հնարավորություն կտա վերջ դնել իրավակիրառ պրակտիկայում՝ հանցանքը խմբի կողմից կատարված լինելու շուրջ ծավալվող մի շարք վեճերի:

Հեղինակի կողմից մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել նաև միջնորդավորված կատարման խնդիրները՝ արարքի հանցավորությունը բացառող այնպիսի հանգամանքների պարագայում, ինչպիսիք են ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ կամ հրաման կամ կարգադրություն կատարելիս արարքի կատարումը:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակն անդրադառնում է հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնահարցերին, մասնավորապես՝ փաստական սխալի, չավարտված միջնորդավորված կատարման և միջնորդավորված կատարման սահմանազանցման դեպքերում արարքների որակման առանձնահատկությունների վերլուծությանը:

Հեղինակի կողմից արտահայտվել են հետաքրքիր՝ թեև ոչ միշտ միանշանակ ընդունվող դիրքորոշումներ, մասնավորապես՝ էջ 109-ում ատենախոսը գտնում է, որ եթե անձը կարծել է, թե հանցանքը կատարում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, ով օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, սակայն իրականում վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության, ապա արարքը պետք է որակել հանցափորձ: Իսկ եթե անձը կարծել է, թե հանցանքի կատարման է դրդել այնպիսի անձի, ով ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն վերջինս օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, ապա կրկին պետք է որակել հանցափորձ՝ սակայն պատժի նշանակման ժամանակ հանցափորձի հանգամանքը չդիտարկել խոչընդոտ՝ անձի նկատմամբ պատիժ նշանակելիս:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Թեև աշխատանքի շրջանակներում հեղինակն անդրադարձել է այն իրավիճակների վերլուծությանը, որոնք վերաբերում են հանցագործության մեկ

սուբյեկտի կողմից երկու կամ ավելի՝ քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձանց օգտագործմանը կամ հանցագործության երկու կամ ավելի սուբյեկտների կողմից՝ հանցանքի կատարման համար նույն՝ քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի օգտագործմանը, և դրանով իսկ՝ փորձել պատասխան տալ նման վիճակներում հանցանքը խմբի կողմից կատարված լինելու հարցերին, սակայն, կարծում եմ, պատշաճ հետևողականություն չի դրսևորել՝ նման դեպքերում հանցակցության ձևերի հարցին անդրադառնալիս: Մասնավորապես, հետաքրքրություն է ներկայացնում, թե ինչպես պետք է լուծվի հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ առանց նախնական համաձայնության դիտարկելու հարցերը, եթե, օրինակ՝ հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու անձինք միմյանց միջև պայմանավորվածություն են ձեռք բերում՝ հանցանքի կատարման համար օգտագործել հանցագործության սուբյեկտ չհանդիսացող երկու անձի՝ վերջիններիս նախապես չտեղեկացնելով, որ հանցանքի կատարմանը համատեղ են մասնակցելու:

2. Աշխատանքում, մասնավորապես՝ էջեր 95-96-ում, հեղինակը նշում է, որ առանց մեղքի վնաս պատճառող անձին օգտագործելով դրսևորվող հանցանքի միջնորդավորված կատարումը հնարավոր է այն դեպքում, երբ միջնորդավորված կատարողի կողմից օգտագործվող անձը վնաս է պատճառում միջնորդավորված կատարողի խաբեության ազդեցությամբ առաջացած բարեխիղճ մոլորության վիճակում:

   Խաբեության մեկնաբանման՝ հեղինակի կողմից ներկայացված տարբերակում, սակայն, նախատեսված չէ նաև վստահության չարաշահման տարբերակը, մինչդեռ անձը կարող է առանց մեղքի վնաս պատճառել՝ գտնվելով նաև վստահության չարաշահման արդյունքում ձևավորված բարեխիղճ մոլորության մեջ: Ցանկալի կլիներ լսել ատենախոսի հիմնավորումներն այս հարցի վերաբերյալ:

3. Աշխատանքի երկրորդ գլխի շրջանակներում՝ հեղինակը ներկայացնում է հանցանքի միջնորդավորված կատարման հնարավորությունը՝ արարքի հանցավորությունը բացառող առանձին հանգամանքների պարագայում, մասնավորապես՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ կամ հրաման կամ կարգադրություն կատարող անձին օգտագործելիս: Կարծում եմ,

աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև միջնորդավորված կատարման հնարավորությանը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների, օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու, օրենքի դրույթների կատարման պարագայում և այլն:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները, իմ կարծիքով չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Լալա Արշավիրի Գրիգորյանի «Հանցագործության միջնորդավորված կատարման համար քրեական պատասխանատվության տեսական և գործնական հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.դ. Ա.Մարգարյան

Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Դեկանի տեղակալ Հ. Խաչիկյան